

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԴԻՏՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
18 փետրվարի 2013թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԴԻՏՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
18 փետրվարի 2013թ.

ԵՐԵՎԱՆ 2013



Սույն ձեռնարկը հրապարակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների: Այն կազմվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

○	ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ	4
○	ԴԻՏՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԸ	6
○	ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ	7
○	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ	12
○	ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ	14
○	ՀՈՒՇԱԹԵՐԹ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	23



Դիտորդական առաքելության նպատակն ընտրական գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա անկախ եզրակացության կազմումը:

Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքության, անկողմնակալության և ընտրական գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

- ✓ միջազգային կազմակերպությունները.
- ✓ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները.
- ✓ օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին.
- ✓ Հայաստանի Հանրապետության այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին:



Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որդես դիտորդ Հայաստանի Հանրապետության ֆաղափաքներ ընդգրկվել չեն կարող:



Միջազգային կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

- ✓ Հայաստանի Հանրապետության Նախագահը.
- ✓ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը.
- ✓ Հայաստանի Հանրապետության վարչապետը.
- ✓ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը:



Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ ընտրությունների վերաբերյալ զեկույցները տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում (www.elections.am):



ԴԻՏՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾԸ

Դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվերակության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ:

Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ 8-րդ օրը, եթե ընտրության արդյունքները դատարան չեն բողոքարկվել: Ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը, եթե վերաքվեարկություն չի նշանակվել: Վերաքվեարկության դեպքում դիտորդների վերագրանցում չի պահանջվում:





ԴԻՏՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Դիտորդն իրավունք ունի՝

- ✓ **Ներկա լինել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում:**

Ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող են ներկա լինել յուրաքանչյուր միջազգային կազմակերպությունից մինչև երկու դիտորդ՝ թարգմանչի ուղեկցությամբ, իսկ տեղական դիտորդների դեպքում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից՝ մեկ դիտորդ:



- ✓ **Միջազգային դիտորդը ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի՝ հավատարմագրման վկայական:**

Միջազգային դիտորդը պարտավոր է դիտորդի հավատարմագրման իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

- ✓ **Տեղական դիտորդն ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե միաժամանակ ունի՝**

ա) դիտորդի հավատարմագրման վկայական.

բ) ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական կամ ստուգարքի արդյունքով ստացած դիտորդական առաքելություն իրականացնելու վկայական:



Միայն այս 2 վկայականների միաժամանակյա առկայության և համապատասխան հանձնաժողովին ներկայացնելու դեպքում է, որ տեղական դիտորդն իրավունք է ստանում ներկա գտնվել ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում):

Տեղական դիտորդը այդ երկու վկայականներն էլ պարտավոր է տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:



- ✓ Հանձնաժողովի նախագահն արգելում է ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի կամ վկայականների անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (տեղամասային կենտրոնում):
- ✓ Ընտրական հանձնաժողովի նիստերին դիտորդի ներկայությունը արձանագրվում է ընտրական հանձնաժողովի կողմից:
- ✓ Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) դիտորդի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է կազմակերպության անվանումը, դիտորդի անունը, ազգանունը և տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը):

Դիտորդն իրավունք ունի՝

- ✓ հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և հաշվարկման գործընթացներին:

Դիտորդները կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները տպագրատնից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով, քվեարկության նախորդ օրը՝



ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից ընտրատարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Դիտորդները կարող են քվեարկության նախորդ օրը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հետևել քվեաթերթիկները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկությանը նախորդող և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Դիտորդն իրավունք ունի՝



անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, ընտրողների ցուցակները կազմող լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ դիտորդները հնարավորություն ունենան անարգել հետևել քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման, քվեաթերթիկների և օգտագործված քվեարկության ծրարների հաշվարկման գործընթացներին:



Դիտորդը կարող է լուսանկարահանել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների միատերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

Ընտրողների ստորագրած ցուցակները չեն կարող լուսանկարահանվել և տեսանկարահանվել:

Դիտորդի պահանջով նրան տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղված՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

Դիտորդն իրավունք ունի՝

- ✓ բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:

Դիտորդն իրավունք ունի՝


- ✓ ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար:
Դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:



Դիտորդն իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին կամ վերջիններին կողմից որոշումների ընդունմանը:



Դիտորդի իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրան մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրան ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:



Դիտորդը պարտավոր է պահպանել ընտրական օրենսգրքի պահանջները: Դիտորդական առաքելություն իրականացնելու շրջանակներում դիտորդն իրավունք չունի կատարել միջազգային իրավունքի նորմերին հակասող կամ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով չսահմանված գործառույթներ:




Դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունները ընտրությունների վերաբերյալ իրենց զեկույցները ներկայացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողով, իսկ միջազգային դիտորդական կազմակերպությունները՝ մասնա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:



Դիտորդի կողմից որևէ թեկնածուի աջակցելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավունք ունի այն կազմակերպությանը, որի անդամ է դիտորդը, զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ



Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները վճարկության նախորդ օրը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ՝

- ✓ բաշխում է տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի անհատական կնիքները
- ✓ որոշում քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի երեք անդամի, որոնք պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն, ստորագրել կամ սեփական դրոշմով դրոշմել կամ անհատական կնիքով կնքել բոլոր քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների բոլոր էջերը:



Քվեաթերթիկները և ընտրողների ցուցակների էջերը ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած սարքերակը փոփոխել չի կարող:

Ընտրողների ցուցակների էջերը ստորագրում են քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի անդամները:



Ստորագրությունը, դրոշմը կամ անհատական կնիքը դրվում է քվեաթերթիկի, ընտրողների ցուցակի յուրաքանչյուր էջի հակառակ կողմում, քվեաթերթիկի դեպքում՝ հատման գծից ներքև, այնպես, որ քվեաթերթիկները մարելու ժամանակ ստորագրությունների ամբողջականությունը պահպանվի:



Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները փետրկության օրը




Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ժամը 7:00-ին:

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությամբ որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

- ✓ բացում է չիրկիզվող պահարանը, հանում է հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնում նախորդ օրվա վիճակահանությամբ իրեն տրամադրված անհատական կնիքը,
- ✓ հանում է փաթեթավորված կնիքը, դրոշմակնիքը, քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ընտրողների ցուցակները,
- ✓ ստուգում է փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացում է փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,
- ✓ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը,
- ✓ ընտրողների ցուցակները հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամներին, քվեաթերթիկները և քվեարկության ծրարները հարյուրական փաթեթով՝ քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամներին, կնիքը և դրոշմակնիքը՝ քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին:



Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

Ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ



ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1

Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի: Առանց սահմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:



Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության՝ բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների:

2

Քվեաթերթիկ և փվեարկության ծրար ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու անդամին, որն անջատում է քվեաթերթիկի ելունդը և քվեաթերթիկի ներքևի հատվածը քվեարկության ծրարի հետ միասին հանձնում ընտրողին:

3

Քվեարկությունը

Ստանալով քվեաթերթիկը և քվեարկության ծրարը, ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:



Ընտրողը փվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ փվեարկության խցիկում: Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչդեպ է փվեարկում:



Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ:



Անձն իրավունք ունի օգնելու փվեաթերթիկն իմնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:



✓ Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկին ամրացվում է քվեաթերթիկի ցանկացած մեկ ելունդ, և քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

4

Ընտրողը մոտենում է քվեարկության ծրարը կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին, վերջինս քվեարկության ծրարը կնքում և քվեարկության ծրարը քվեատուփի մեջ գցելու հնարավորություն է ընձեռում միայն ընտրողի անձը հաստատող փաստաթղթում դրոշմակնիքի բացակայությունը ստուգելուց և դրա բացակայության դեպքում անձը հաստատող փաստաթուղթը դրոշմակնքելուց հետո:

Տեղամասային կենտրոնի փակումը

Ժամը **20:00** տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և



- ✓ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- ✓ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.
- ✓ փակում է քվեատուփի ճեղքը.
- ✓ փակում է տեղամասային կենտրոնը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում:

Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը:



Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում կատարվում են հետևյալ գործողությունները

- 1 փաթեթավորվում են հանձնաժողովի անդամների անհատական կնիքները.
- 2 հաշվարկվում են չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.
- 3 փաթեթավորվում են օգտագործված քվեաթերթիկների ելունդները.
- 4 հաշվարկվում և արձանագրվում է ընտրողների ընդհանուր թիվը.
- 5 հաշվարկվում և արձանագրվում է քվեարկության մասնակիցների թիվը ընտրողների ցուցակներում՝ ընտրողների ստորագրությունների հիման վրա.



Ընտրողների ստորագրած ցուցակները փաթեթավորվում և սեղադրվում են ընտրական փաստաթղթերի դարկում:

- 6 տեսակավորվում են քվեարկության ծրարները և քվեաթերթիկները

Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը:

Քվեատուփից հանում է քվեարկության մեկ ծրար, բարձրաձայն հայտարարում ծրարի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկայացնողի համար:

Պահանջի դեպքում քվեարկության ծրարը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:

Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն:

Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, սահմանված նմուշի քվեարկության ծրարից հանում է քվեաթերթիկը:


Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկայացնողի համար:



Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:

Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն:

Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը), իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի օգտին, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, իսկ ծրարը՝ սահմանված նմուշի քվեարկության ծրարների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ ծրարը:



Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր ծրարների համար:

Քվեարկության չսահմանված նմուշի ծրարներ են համարվում.

- ✓ սահմանված նմուշից ակնհայտ տարբերվող,
- ✓ չկնքված կամ այլ կնիքով կնքված քվեարկության ծրարը, ինչպես նաև՝
- ✓ քվեաթերթիկ չպարունակող քվեարկության ծրարը.
- ✓ մեկից ավելի քվեաթերթիկ պարունակող քվեարկության ծրարը.
- ✓ չսահմանված նմուշի քվեաթերթիկ պարունակող քվեարկության ծրարը.
- ✓ ընտրողի ինքնությունը բացահայտող նշումներ ներառող քվեարկության ծրարը:



Քվեարկության ծրարի մեջ միևնույն քվեարկության մեկից ավելի քվեաթերթիկներ կամ չսահմանված մնուշի քվեաթերթիկ (քվեաթերթիկներ) գտնվելու դեպքում քվեաթերթիկը (քվեաթերթիկները) հետ է դրվում ծրարի մեջ, իսկ ծրարը՝ չսահմանված մնուշի քվեարկության ծրարների փաթեթի մեջ:

Չսահմանված մնուշի քվեարկության ծրարների դեպքում քվեաթերթիկները ծրարից չեն հանվում, իսկ ծրարը դրվում է չսահմանված մնուշի քվեարկության ծրարների փաթեթի մեջ:

Չսահմանված մնուշի քվեարկության ծրարները դրանցում գտնվող քվեաթերթիկների հետ անհապաղ նարվում են և փաթեթավորվում: **Այս փաթեթը, առանց պարկի մեջ տեղադրելու, ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:**

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված մնուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

- ✓ մեկից ավելի թեկնածուի օգտին մշումներ է ներառում.
- ✓ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ եմ» և «դեմ եմ» բառերի դիմաց մշումներ է ներառում.
- ✓ որևէ մշում չի ներառում.
- ✓ բացի քվեարկության համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան մամսվող մշանից ներառում է այլ՝ ընտրողի ինքնությունը բացահայտող մշում.
- ✓ ընտրական հանձնաժողովի անդամի կողմից ստորագրված կամ սեփական դրոշմով դրոշմված կամ անհատական կնիքով կնքված չէ.
- ✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում մշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է մշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և մշումներ կատարելու այլ առարկաներ:



7 հաշվարկվում և հրապարակվում են.

- յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- անվավեր քվեաթերթիկների թիվը,
- սահմանված նմուշի քվեարկության ծրարների թիվը:

Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից 10 ժամ հետո:

Քվեարկության ավարտից հետո ոչ ուս, քան 12 ժամվա ընթացքում ընտրատարածային ընտրական հանձնաժողով են ներկայացվում.

- ✓ ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը,
- ✓ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,
- ✓ չօգտագործված քվեարկության ծրարները,
- ✓ չսահմանված նմուշի քվեարկության ծրարները,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- ✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը,
- ✓ քվեատուփը (շրջիկ արկղը),
- ✓ քվեարկության խցիկները:



Ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո



Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմման վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները՝ ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:



Ելակետային սվալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հաս-հաս հաշվելու միջոցով ստացված սվալները:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:



Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը պարբերաբար, բայց ոչ ուշ, քան 3 ժամը մեկ կատարում է ընտրատարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի:

Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը ավարտում է քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը աղյուսակավորում է քվեարկության արդյունքները՝ ըստ ընտրական տեղամասերի:

Ընտրության արդյունքների ամփոփում

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 00:00-ից սկսած՝ իրականացնում է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի: Քվեարկության նախնական արդյունքների աղյուսակավորումը կենտրոնական ընտրական հանձնաժողովն ավարտում և ընտրությունների նախնական արդյունքները հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրում է ընտրական տեղամասից քվեարկության արդյունքների մասին վերջին տեղեկությունները ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան մեկ ժամվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան քվեարկության ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում:





Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված՝ ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո ամփոփում է Հանրապետության Նախագահի ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք ու հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակում այդ արդյունքները:



Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ քվեարկության արդյունքների վերաբերյալ:



Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում **www.elections.am**:



Հ ՈՒ Շ Ա Թ Ե Ր Թ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԻՆԶԵԿ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Քվեարկության օրը ժամը 7:00-8:00

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.

- ստուգել պահարանին սուսնձված թղթի ամբողջականությունը և ուստիականության ծառայողներից ընդունել չհրկիզվող պահարանը,
- գրանցամատյանում լրացնել պահարանն ընդունելու մասին արձանագրությունը,
- իրականացնել վիճակահանություն հանձնաժողովի անդամների գործառույթներն ու դրանց հերթափոխը որոշելու համար,
- վիճակահանության արդյունքները գրանցել գրանցամատյանում,
- բացել չհրկիզվող պահարանը,
- հանել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները և հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին հանձնել նախորդ օրվա վիճակահանությանը իրեն տրամադրված անհատական կնիքը,
- հանել հարյուրական փաթեթներով քվեաթերթիկները և քվեարկության ծրարները ու հանձնել քվեաթերթիկներ և քվեարկության ծրարներ հատկացնող անդամին (անդամներին),
- հանել ընտրողների ցուցակները և հանձնել ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամին (անդամներին),
- հանել հանձնաժողովի փաթեթավորված կնիքը, ստուգել փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացել փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարել կնիքի համարը,
- հանել դրոշմակնիքը,



- հանձնաժողովի կնիքը և դրոշմակնիքը հանձնել քվեարկության ծրարները կնքող և քվեատուփի համար պատասխանատու անդամին: Նրան փոխանցել համապատասխան թանաքներով թանաքոտված բարձիկներ,
- ստուգել քվեատուփի (առկայության դեպքում նաև շրջիկ արկղի) դատարկ լինելը (բարձրաձայն հայտնել այդ մասին), և մինչև փակելը այն ցուցադրել նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց, ապա փակել և հատուկ կապիչներով կնքել քվեատուփը (առկայության դեպքում նաև շրջիկ արկղը):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ Նշված բոլոր գործողությունները կատարվում են այն հաշվով, որպեսզի ժամը **8:00**-ի դրությամբ կատարված և ավարտված լինեն:
- ✓ Հանձնաժողովի նախագահը ժամը **8:00**-ին, բարձրաձայն հայտարարում է քվեարկության սկիզբը և թույլատրում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:
- ✓ Տեղամասային կենտրոնը բացվելուց հետո հանձնաժողովի նախագահը անմիջապես տեղեկացնում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին տեղամասը բացված լինելու մասին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քվեարկության ընթացում

- ✓ մինչև ժամը **11:30**-ը, **14:30**-ը, **17:30**-ը և **20:30**-ը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով է հաղորդվում համապատասխանաբար մինչև ժամը **11:00**-ն, **14:00**-ն, **17:00**-ն և **20:00**-ն տվյալ ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը:
- ✓ հաղորդված թվերը գրառվում են նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԱԿՈՒՄ*****Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.***

- Ժամը **20:00** հայտարարել քվեարկության ավարտի մասին.
- արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.
- քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին տալ քվեարկելու հնարավորություն.
- փակել քվեատուփի ճեղքը.
- փակել տեղամասային կենտրոնը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ***Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունների հաջորդականություն.***

- փաթեթավորել հանձնաժողովի անդամների անհատական կնիքները.
- անհատական կնիքների փաթեթը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում.
- հաշվարկել չօգտագործված քվեաթերթիկների թիվը.
- այդ թվին ավելացնել նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ տրված, տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող կամ կրկնվող համարով քվեաթերթիկները.
- ստացված թիվը, որպես մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվ բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- չօգտագործված քվեաթերթիկները մարել դրանք ներքևի աջ կամ ձախ անկյունից կտրելու միջոցով, այնպես, որ չվնասվեն հանձնաժողովի անդամների՝ քվեաթերթիկի վրա առկա ստորագրությունները.
- մարված քվեաթերթիկների փաթեթը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում.



- փաթեթավորել օգտագործված քվեաթերթիկների ելուղները.
- օգտագործված քվեաթերթիկների ելուղների փաթեթը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում.
- առանձին-առանձին հաշվարկել ընտրողների հիմնական և լրացուցիչ ցուցակներում ընդգրկված ընտրողների թվերը.
- ընտրական ցուցակների ընտրողների թվերը առանձին հաշվարկելուց հետո, յուրաքանչյուր ցուցակի դեպքում բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- բոլոր ցուցակների ընտրողների թվերը գումարել, գումարը բարձրաձայն հրապարակել որպես ընտրողների ընդհանուր թիվ և լրացնել գրանցամատյանում.
- ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում) ընտրողների ստորագրությունների հիման վրա հաշվարկել քվեարկության մասնակիցների (քվեաթերթիկներ ստացած ընտրողների) թիվը, բարձրաձայն հրապարակել և լրացնել գրանցամատյանում.
- ընտրողների ցուցակների ծրարը տեղադրել ընտրական փաստաթղթերի պարկում:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱՐՆԵՐԻ
ԵՎ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՒՄ**

- բացել քվեատուփը,
 - ✔ քվեատուփից հանել քվեարկության մեկ ծրար,
 - ✔ բարձրաձայն հայտարարել ծրարի սահմանված կամ չսահմանված նմուշի լինելու մասին,
 - ✔ ցուցադրել այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար,
 - ✔ սահմանված նմուշի քվեարկության ծրարից հանել քվեաթերթիկը,
 - ✔ բարձրաձայն հայտարարել քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին,



- ✓ վավեր քվեաթերթիկի դեպքում բարձրաձայն հայտարարել նաև, թե ինչպես է քվեարկված,
- ✓ քվեաթերթիկը ցուցադրել այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար:

Այս գործողությունները կրկնվում են քվեատուփում առկա բոլոր ծրարների և քվեաթերթիկների համար:

Քվեարկության ծրարները և փվեաթերթիկները սեսակավորելուց հետո մեկ առ մեկ հաշվարկվում է.

- յուրաքանչյուր թեկնածուին կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,
- անվավեր քվեաթերթիկների թիվը,
- սահմանված մնուշի քվեարկության ծրարների թիվը:

փաթեթավորվում են առանձին փաթեթներում (ծրարներում) և յուրաքանչյուրի վրա նշվում է դրա պարունակությունը:

Չսահմանված մնուշի քվեարկության ծրարները և չսահմանված մնուշի քվեաթերթիկները մարվում են, չեն հաշվարկվում, հաշվի չեն առնվում արդյունքներն ամփոփելիս և փաթեթավորվում են առանձին փաթեթում և փաթեթի վրա նշվում է «Չսահմանված մնուշի քվեարկության ծրարներ» բառերը, և այն առանց պարկի մեջ տեղադրելու, ներկայացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրությունը կազմվում է 4 օրինակից.



Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները, այն կնքում է հանձնաժողովի նախագահը:



Հանձնաժողովի անդամը պարտավոր է ստորագրել արձանագրությունը: Եթե նա արձանագրության տվյալների վերաբերյալ ունի առարկություն (հատուկ կարծիք), ապա այդ մասին գրառում է կատարում արձանագրությունում՝ դրա համար նախատեսված հատուկ տեղում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

- ✓ Արձանագրությունը ստորագրվում է միայն բոլոր տվյալները լրացնելուց հետո:
- ✓ Արգելվում է նախապես ստորագրել քվեարկության արդյունքների արձանագրության ձևաթղթերը:

Արձանագրության 4 օրինակից՝

- մեկ օրինակ փակցվում է տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին,
- մեկ օրինակ տեղադրվում է ընտրական փաստաթղթերի պարկում.
- երկու օրինակը ներկայացվում են ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրամադրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:



ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ԳԱՄԱՐ